# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 2

**ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուս. տարվա**
**գիտական խորհրդի նիստի**

ք.Երևան 19 սեպտեմբերի 2025թ.

***Ներկա էին՝*** գիտխորհրդի 20 անդամներից 14–ը (ներկայաթերթիկը կցված է):

***Նախագահ՝*** ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

***Գիտական քարտուղար՝*** ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

*ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝*

1. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցը: Զեկուցող՝ Ա. Մկրտչյան:**
2. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:**
3. **Ընթացիկ հարցեր:**

3.1. **Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Էմմա Խաչատրյանի՝ « β-դիրքում ալկիլոլային և պիպերազինային տեղակալիչներ պարունակող (S)-α-ալանինի նմանակների ասիմետրիկ սինթեզ և կենսաբանական հատկությունների հետազոտում» թեմայով տեղական դրամաշնորհի շրջանակներում երկրորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվության քննարկման և հաստատման հարցը: Զեկուցող՝ Ա. Դադայան:**

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցը:**

***Լսեցին՝*** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ., դոցենտ Անի Դադայանը, ով հաղորդեց գիտխորհրդի անդամներին, որ ս.թ. սեպտեմբերի 1-ից Հովիկ Հարությունի Փանոսյանը նշանակվել է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի

Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ: Համաձայն Ֆարմացիայի ինստիտուտի կանոնադրության (հաստատված 22.03.2023թ.), նա ի պաշտոնե պետք է հանդիսանա ինստիտուտի գիտական խորհրդի անդամ: Ա. Դադայանը միաժամանակ նշեց, որ ուսումնառությունն ավարտելու պատճառով Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմից դուրս են եկել ուսանող անդամներ՝ Մարիամ Վարդանի Զաքարյանը և Հեղինե Ստեփանի Օհանջանյանը: Նրանց փոխարեն Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական խորհուրդն առաջադրել է «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Աննա Էռնեստի Վարդանյանի և նույն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Ալլա Էդգարի Բեգլարյանի թեկնածությունները:

***Եղույթ ունեցան՝*** գիտխորհրդի նախագահ Ա. Մկրտչյանը, անդամներ՝ Ա. Հովհաննիսյանը, Հ. Սիմոնյանը, ովքեր կողմ արտահայտվեցին նշված ուսանողների թեկնածություններին՝ գիտխորհրդի կազմում ընդգրկելու համար:

***Որոշեցին՝*** բաց քվեարկությամբ (միաձայն), դիմել ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու և Հովիկ Հարությունի Փանոսյանին ի պաշտոնե անդամի կարգավիճակով, իսկ ուսանողներ Աննա Էռնեստի Վարդանյանին և Ալլա Էդգարի Բեգլարյանին ուսանող անդամի կարգավիճակով ընդգրկելու համար:

2. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:**

***Լսեցին՝*** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար բ.գ.թ. Ա. Դադայանը, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ համաձայն 2025/2026 ուս.տարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի, մինչև ս.թ. սեպտեմբերի 23-ը պետք է ներկայացնել անվանական կրթաթոշակի հավակնորդների ցուցակը: Նա հավելեց, որ նախորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակից Նազելի Չարչյանի անվան անվանական կրթաթոշակ է ստանում ներկայումս մագիստրատուրայի ուսանող Մարիամ Մարտունի Մարգարյանը, ով գերազանց առաջադիմությամբ շարունակում է իր ուսումը: Ա. Դադայանը նշեց, որ անհրաժեշտ է ներկայացնել մեկ ուսանողի թեկնածություն՝ Լևոն Ռոտինյանի

անվան անվանական կրթաթոշակի համար: Նա նշեց, որ համաձայն «ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի» 36-րդ կետի, անվանական կրթաթոշակի կարող են հավակնել 4 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմությամբ (ՄՈԳ>18) և գիտական ու հասարակական ակտիվությամբ ուսանողները: Ա. Դադայանը տեղեկացրեց, որ «Ֆարմացիա» մասնագիտության բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողների շարքում Ալլա Էդգարի Բեգլարյանի ՄՈԳ>18, միայն 3-րդ կիսամյակում ՄՈԳ = 17,93:

Ելույթ ունեցան գիտխորհրդի նախագահ Ա. Մկրտչյանը, անդամներ՝ Ս. Պետրոյանը, Հ. Սիմոնյանը, ովքեր առաջարկեցին Ալլա Էդգարի Բեգլարյանի թեկնածությունը՝ Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակի ներկայացնելու համար:

***Որոշեցին՝*** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

1. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողուհի Մարիամ Մարտունի Մարգարյանի՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակի տրամադրումը:
2. Ներկայացնել «Ֆարմացիա» մասնագիտության բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի Ալլա Էդգարի Բեգլարյանին՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակի:

**3. Ընթացիկ հարցեր:**

**3.1. Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտներ Էմմա Խաչատրյանի և Միքայել Թորոսյանի կողմից՝ տեղական դրամաշնորհի շրջանակներում երկրորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվության քննարկման և հաստատման հարցը: Զեկուցող՝ Ա. Դադայան:**

***Լսեցին՝*** ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Անի Դադայանին, ով նշեց, որ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Էմմա Խաչատրյանի կողմից գրավոր ներկայացվել է հաշվետվություն՝ 23AA-1D021 ծածկագրով «β-դիրքում ալկինոլային և պիպերազինային տեղակալիչներ պարունակող (S)-α-ալանինի նմանակների ասիմետրիկ սինթեզ և կենսաբանական հատկությունների հետազոտում»

վերնագրով դրամաշնորհի կատարման երկրորդ տարվա վերաբերյալ: Ա. Դադայանը տեղեկացրեց, որ այժմ Էմմա Խաչատրյանը նույն դրամաշնորհի շրջանակներում գտնվում է Գերմանիայի Գրայֆսվալդի համալսարանում՝ սինթեզված նյութերի կենսաբանական հետազոտությունների իրականացման համար: Էմմա Խաչատրյանի կողմից հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում սինթեզվել են ելային ամինաթթվային կոմպլեքսները, իրականացվել են դեհիդրոալանինային կոմպլեքսին տարատեսակ նուկլեոֆիլների Միքայելի միացման ռեակցիաներ, անջատվել են համապատասխան նոր, գրականության մեջ չնկարագրված ոչ սպիտակուցային ամինաթթուները:

Թեմայի կատարման աշխատանքներն իրականացվել են ըստ նախօրոք հաստատված օրացուցային պլանի: Ստացված արդյունքների հիման վրա տպագրվել են 2 հոդվածներ՝ ՄԳՇ-ում ընդգրկված ամսագրերում:

***Որոշեցին*** ՝(միաձայն) հաստատել 23AA-1D021 ծածկագրով « β-դիրքում ալկինոլային և պիպերազինային տեղակալիչներ պարունակող (S)-α-ալանինի նմանակների ասիմետրիկ սինթեզ և կենսաբանական հատկությունների հետազոտում» վերնագրով դրամաշնորհի կատարման երկրորդ տարվա հաշվետվությունը:

Հաջորդիվ ելույթ ունեցավ ասպիրանտ Միքայել Թորոսյանը, ով ներկայացրեց 23AA-2F039 ծածկագրով «Պոլիմեր-հակաբիոտիկ կոմպոզիտների բաղադրության մշակում եռաչափ տպագրությամբ ստացվող բիոիմպլանտների համար» վերնագրով դրամաշնորհի կատարման երկրորդ տարվա հաշվետվությունը: Միքայել Թորոսյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում նախագծի շրջանակներում իրականացվել է 3D տպագրվող օրթոպեդիկ իմպլանտներ՝ պոլի(էթիլեն գլիկոլ) դիակրիլատ (PEGDA) և հիդրոքսիապատիտ (HA) հիմքով՝ բարձր կենսահամատեղելիությամբ և մեխանիկական կայունությամբ: Ռաման սպեկտրոսկոպիայի և թերմոգրավիմետրիայի անալիտիկ մեթոդներով գնահատվել է ստացված պոլիմերների ինչպես նաև թերմոգրավիմետրիկ անալիզը (TGA)՝ ջերմային կայունությունը որոշելու համար:

Թեմայի կատարման աշխատանքներն իրականացվել են ըստ նախօրոք հաստատված օրացուցային պլանի: Կատարված աշխատանքների հիման վրա

տպագրության է ներկայացվել մեկ մոնոհոդված՝ «Extraction of trimethylbenzoyl diphenylphosphine oxide from the cured PEGDA-Hydroxyapatite bone graft» վերնագրով:

***Որոշեցին՝*** (միաձայն) հաստատել 23AA-2F039 ծածկագրով «Պոլիմեր-հակաբիոտիկ կոմպոզիտների բաղադրության մշակում եռաչափ տպագրությամբ ստացվող բիոիմպլանտների համար» վերնագրով դրամաշնորհի կատարման երկրորդ տարվա հաշվետվությունը:

**Գիտական խորհրդի նախագահ՝**
**ք.գ.թ, դոցենտ** **Ա. Մկրտչյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝**
**ք.գ.թ., դոցենտ** **Ա. Դաղայան**